

անուանական անդամներուն թիւն է 2 342,153: Բայց այս հաշուին մէջ են ոչ միայն այնպիսիներ որ իրենց հաւատոյ դաւանութիւնը կու տան, ինչպէս կ'ըլլայ Ազատ Եկեղեցիներու մէջ, այլ և այն ամէնը որ մկրտուած են, հոգ չէ թէ՛ ի՛նչպէս կ'ապրին հիմա: Ազատ Եկեղեցիները աւելի բազմաթիւ են իսկապէս Ամբողջ աշխարհի վրայ Անկլիքաններու համագումարն էր 1909ին 3.905,957, իսկ Ազատ Եկեղեցիներու անդամներուն համագումարը 21,693,391:

Այսօր Անկլիքան Եկեղեցւոյ պատկանող անաշատ մարդիկ կ'ողբան 1662ի օրէնքին խտտութիւնը և կ'զգան թէ իրենց եկեղեցին ո՛րքան կորուստ կրած է այնքան մարդոցմէ զրկուելով հիմա որոնք կրնային իր մէջ մնացած ըլլալ, եթէ այն օրէնքը չըլլար: Հալածանքը միշտ աղետարեր է հալածիչներուն:

Այսօր ոչ-Անկլիքանները որոնց նախահայրերը 1662ին վտարուեցան՝ ամենակարեւոր գիրքեր կը գրուեն կառավարութեան մէջ և կը գտնուին թագաւորին ամէնէն վստահելի խորհրդականներուն և ժողովրդին ամէնէն իմաստուն առաջնորդներուն մէջ:

Ո՛ր ատեն որ խզծի և անձնական ատերեւոյթ չանու և անաւելութեան խնդիր ծագի, ընտրելի մէկ ուղի կայ միայն, և այն է քաջաբար Աստուծոյ ապաւինիլ և ուղիղն ընել: 1662ի այն արի պաշտօնականներուն ընթացքը այսօր մեզի ներշնչութիւն և օրինակ է, և արդիւնքը որքան երեւցաւ ցարդ պատժութեան մէջ՝ յիշատակելի ապացոյց է թէ Աստուած հաւատարիմ է իր խոստումները պահելու մէջ հանդէպ այնպիսիներու որոնք ամէն բան կը թողուն իրեն համար:

Թերևս դարձեալ այս նիւթին վրայ գրենք այն մեծագոյն տօնախմբութեան առիթով, որ դալ ափս անդի պիտի ունենայ:

ՀՈՐԻԶՈՆԸ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԶՇՄԱՐԻՑ Թոյն իր 40,000րդ կարեւորութիւնը թուոյն հրատարակման առիթով ճօխ յաւելուած մը հանեց, որմէ կը թարգմանենք հետեւեալ յոյժ շահեկան յօդուածը:

Առ հասարակ կը կարծուի անտարակոյս թէ արդի աշխարհի մեքենական բոլոր գիւտերուն մէջ մարդու կեանքին վրայ ամէնէն աւելի ազդեցութիւն գործողը տպագրութիւնն եղած է: Այս կարծիքն հաւանօրէն ուղիղ է: Բայց զայն հաստատելու համար սովորաբար արուած պատճառները ա-

ւելի վիճելի են: Արդարեւ տպագրութեան ի գովեստ գրողներ կամ խօսողներ յաճախ կը թուին ենթադրել թէ այդ գիւտէն առաջ ընաւ կարգաւ չկար: Միջին դարերու հետ կը բազդատեն արդի ժամանակները և կը համարին թէ տպագրութեան գիւտին շնորհիւ է որ հիմա աւելի շատ կը կարգանք: Հարկաւ այդ է պատճառներէն մէկը, բայց ոչ միակը: Նոյնքան կարեւոր քիչ քիչ պատճառ մը սա է թէ ընկերութիւնը այնպիսի վիճակի մը հասած է, ուր կարգաւ աւելի անհրաժեշտ է և հետեւապէս աւելի ընդհանրացած քան Միջին դարերու մէջ: Ոչ ալ այս անհրաժեշտութիւնը արուեստական է կամ արդիւնք տպագրութեան գիւտին: Վասն զի ընթերցասիրութիւնը Հռոմէական պետութեան ամէնէն քաղաքակիրթ շրջանին մէջ ալ անհրաժեշտ ու հետեւապէս ընդհանուր էր: Եւ այդպէս ըլլալէ ա՛յն ժամանակ միայն դարեցաւ երբայդ քաղաքակիրթութիւնը տկարացաւ և ընկերութիւնն սկսաւ պարզագոյն գրութեան վերադառնալ: Գիրքերը Մարտիալէս բանաստեղծին (43—104) օրով եթէ այժմօւ չափ աժան կամ ընդհանուր չէին, հաւանօրէն աւելի աժան և ընդհանուր էին քան զոր երբեք եղան յետոյ մինչեւ ԺԸ, եթէ ոչ մինչեւ ԺԹ դարը: Երբ բազմաթիւ աղքատներ և նոյն իսկ գիրիներ կարող էին արագ ու յստակ գրել, կարելի էր գիրք մը կարգաւ և չնչին ծախքով հարիւր կամ հարիւրէ աւելի մարդոց գրել տալ միեւնոյն ժամանակ:

Բաղձապատկութեան այս գործողութիւնն հաւանօրէն այնչափ արագ կ'ըլլար որ հանրութիւնը կ'ունենար բոլոր իր ուղած գիրքերը, կամ գէթ բոլոր լաւերը, Շատ գիրքեր կ'ուզուէին, վասն զի շատեր գիտէին կարգաւ: Եւ մեծ քանակութեամբ կը հայթայթուէին վասն զի շատեր գիտէին գրել: Կարգաւ ու գրել ընկերութեան այդ վիճակին մէջ օգտակար գործեր էին անոր բարձր կազմակերպութեան և բարդ գործառնութիւններուն պատճառով: Աշխարհ այդ վիճակին հասած էր ասանց տպագրութեան օգնութեան, և կրնար հասնիլ նմանապէս արդի ժամանակներու մէջ: Սակայն յաճախ կը լսենք թէ գիրքերն այնքան աժան են հիմա որ բաց ի սաստիկ աղքատներէն ամէն ոք կարող է գնել զանոնք: Սակայն դժբախտաբար ս՝ ժան գիրքերէ տարբեր բան մը պէտք է զարգացման և մշակման համար: Կրնայ մէկը դասական գիրք մը գնել երեք դահի, բայց չկրնար երեք դահի գնել ժամանակը որու կը կարօտի խելամտութեամբ և հրճուանքով կարդալու համար զայն: Շատ չեն բազմազարդ այն հարուստները, որ իրենց սփոփանքին կամ հաճոյքին համար գրա-

կան գլուխ գործոց մը կը կարգան օրուան ծանր աշխատութիւնէն ետեւ: Թեթե ու զուարճալի բաներ կը նախընտրեն անոնք, ոչ որովհետեւ դարտարկազլուխ են անպատճառ—վասն զի Տարվին ալ նոյն սովորութիւնն ունէր—այլ որովհետեւ լուրջ ընթերցանութեան պարագելու ոյժ չունին: Եւ եթէ բազմազարդ հարուստներն այսպէս են, ո՛րչափ եւս աւելի բազմազարդ աղքատները: Սակաւաթիւ անձեր գիտութեան կամ զեղարուեստի սըրբազան խանդ մը ունին որ ֆիզիքական ամէն խոնջութեան կը յաղթէ: Սակայն ստուար բազմութիւններ լոկ զուարճութեան կը յատկացնեն իրենց ընթերցանութեան կարողութիւնը: Ժամանակ ունեցող մշակեալ մարդը, որ կը զանգատի թէ խուժանը փութ բաներ կը կարգայ, թող իւրովի հարցնէ թէ ինք Դրախտ կորուսեալ պիտի կարգա՞ր իրիկուն մը, եթէ օրն ի բուն գործարանի մէջ աշխատէր: Տպագրութեան գիւտը ամբոխին նորատեսակ զուարճութիւն մը տուաւ, որու համար կրնան շնորհակալ ըլլալ: Բայց եթէ առկէ աւելի բան մը տուած չըլլար, շատ կարեւոր դէպք մը պիտի չհանդիսանար մարդկային ազգին պատմութեան մէջ:

Ինչո՞ւ կարեւոր հանդիսացաւ ուրիմն: Ինչ ազդեցութիւն ունեցաւ մարդոց կեանքերուն վրայ, անոնց ոչ միայն արտաքին ունակութիւններուն այլ և տեւական բարորութեան վրայ: Եթէ այս հարցման պիտի պատասխանենք, պարտիմք անոր քաղաքական արդիւնքներն ինկատ առնել: Հոս մէական պետութեան ընկերային վիճակը մեր վիճակէն շատ չտարբերի իմացականապէս, բայց քաղաքական տարբերութիւնը մեծ է: Եւ տպագրութիւնը առ հասարակ կարծուածէն շատ աւելի դեր ունի ատոր մէջ: Հին աշխարհի ամէնէն ակնյայտի ձախողուածը քաղաքական էր, այսինքն փոքր քաղաքներու կառավարական կազմը մեծ քաղաքներու, նահանգներու կամ երկիրներու յարմարցնելու անյաջողութիւնը: Վասն զի պատմութիւնը ինչպէս քաղաքի կառավարութիւններով երեւցաւ, նոյնպէս անոնց հետ աներևութացաւ: Եւ պատճառը սա էր որ մեծ նահանգներու կամ երկիրներու մէջ քաղաքացիներու ընդհանրութիւնը չէր կրնար գիտնալ թէ կառավարական գործն ինչպէս կ'ընթանար և ուստի չէր կրնար անոր վրայ հսկողութիւն ի գործ դնել: Կը կարծուի թէ մենք մեծ նահանգներու մէջ ազատութիւն ստացած ենք ներկայացուցչական կառավարութեան միջոցով: Բայց այդ դրութիւնը ամէն բան մեքենաբար լաւ ընթացքի մէջ պահող յուռուժ մը չէ: Եթէ ընտրողները անտեղ-

եակ մնան իրենց ներկայացուցիչներուն արարքներուն, գործնական ամէն տեսակէտով ենթարկուած կ'ըլլան անպատեհ այն վիճակին, որու կը մատուցին քաղաքացիները երբ իրենց կառավարական դրութիւնը այլեւս դադրի օգտակար ըլլալէ: Այդ ժամանակ ոյժը կը կեդրոնանայ քանի մը անձերու ափին մէջ, որոնք գիտեն թէ ինչ կ'ընեն ներկայացուցիչները և ուստի կրնան դապել զանոնք: Այդպէս եղաւ Անգղիոյ մէջ ԺԼ դարուն և, եթէ տպագրութիւնը չկենար, այդ վիճակը կրնար շարունակել մինչև որ կառավարութիւնը բացարձակ սակաւապետութիւն մը դառնար հոն: Սակայն տպագրութիւնը կար իրրև հնարաւոր գործիք քաղաքական ծանօթութիւն ծաւալելու, ինչ որ անհնար էր հին աշխարհին մէջ, և ծաւալելու այդ հնարաւորութիւնը իրականութեան փոխուեցաւ: Վիճաբանութիւններու հրատարակումը կ'ուզուէր անձկագին և կը պահանջուէր յամառօրէն, քանի ընդդիմութիւն ցուցուէր խստիւ, վասն զի տպագրութեան միջոցով իրական հրատարակութիւն մը կը դառնար՝ փութով հազարաւոր ընթերցողներու ձեռք հասնող: Քաղաքական լուրերու տարածման այս գործին մէջ տպագրութեան այս գերազանց արագութիւնը կենսական կարեւորութիւն ունէր: Ծատ հոգ չէ՝ թէ արդեօք նոր գիրք մը, ո՛րչափ ալ լաւ ըլլայ, կը կարգացուի՝ իր հրատարակումէն չաքաթ մը, տարի մը կամ քանի մը տարի ետքը: Անոր ազդեցութիւնը կրնայ քառորդ դար մը կամ աւելի ժամանակ յապաղել և սակայն վերջապէս հզօր ըլլալ: Բայց քաղաքական լուրերը արագ հասնելու են շահագրգռողներուն, ապա թէ ոչ՝ ուժ պէտ կ'ըլլան հին պատմութեան նման: Տպագրութիւնը, և յետոյ երկաթուղին ու հեռագրութիւնը, այնքան արագ ու աման տարածեցին զանոնք քաղաքակիրթ ժողովուրդներու մէջ որ արդի ուսմ. կազմակերպման երկրի մը քաղաքացիները գիտեն թէ ինչպէս կը կառավարուին իրենք, ինչպէս կը գիտնային ինքնավար հին քաղաքի մը բնակիչները: Երկայացուցչական կառավարութեան աւելի այս գիտութիւնն է որ ուսմ. կազմակերպութիւնը կամ ժողովրդային կառավարութիւնը հնարաւոր կ'ընէ արդի լայնատարած երկիրներու մէջ, և է ազատութեան նպաստող հզօր ազդակ մը այնպիսի երկիրներու մէջ իսկ որ սոյն դրութեամբ չեն կառավարուիր: Վասն զի անոնց մէջ ալ կառավարութիւնը կամ գէթ իր արարքները չեն կրնար զաղանի պահուել: Երբ տպագրութիւն չկար, ոչ ալ լուր ստանալու տեսէ արագ միջոց, հարստահարութեանէ կամ կառավարական սխալներէ վնաս:

ուողներ իրենց անձնական վնասներուն միայն կ'ըլլային տեղեակի իրենց դժգոհութիւնը իրենց պէս մեկուսացեալ կը թուէր իրենց: Երկրի մը մէկ դաւառը ուրիշ գաւառի մը զգացումներուն անտեղեակ կը մնար: Եթէ ոեւէ ընդդիմութիւն ընէր, առանձին և կուրորէն պիտի պայքարէր ամէն տեսակ կազմակերպութեամբ ու տեղեկութեամբ իր մէջ գերազանց իշխանութեան մը գէմ: Սակայն սպազորութեան շնորհիւ և լուրերու տարածման ծառայող ուրիշ ամէն միջոցներով կառավարութիւնը կորսնցուց իր այդ մեծ առաւելութիւնը: Գաւառ մը կառավարութեան չափ արագ կ'իմանաւ այսօրինչ որ ուրիշ գաւառ մը կը խորհի կամ կ'ընէ: Ոչ մէկ զրականութիւն կրնայ կասեցնել արդի մամուլը կամ զրոյցներու տարածումը, որ յաճախ աւելի յուզիչ են քան ծածուկ պահուած իրողութիւնները: Տպագրութեան զօրութիւնը այս մասին որոշ ցուցուցեալ առաջին անգամ Ֆրանսական յեղափոխութեան և անոր առաջնորդող խոսիւթիւններուն ժամանակ: Եթէ Անգլիոյ ներքին պատերազմը այն յեղափոխութեան հետ բաղդատենք, չենք կրնար չտեսնել տարբերութիւնը մէկուն ցիրուցանութեան և միւսին կազմակերպեալ, միացեալ և յարաճուն զօրութեան միջև: Այս տարբերութիւնը պէտք չէ բացատրել լոկ ազգային նկարագրի կամ յուզման առտիճանի տարբերութիւններով: Պէտք է հաշուի առնել թէ սպազորութիւնը 1789ին լուրերու տարածման և կարծիքի արտայայտութեան աւելի հզօր սատար մը եղած էր: Այդ պատճառով Ֆրանսացիները կրցան իրեն ամէկ ժողովուրդ, գրեթէ մէկ բանակ, զգալու գործել:

Կրնայ կարծուիլ թէ Ֆրանսական յեղափոխութեան մոլուցքը սնուցանող զիւր մը բարիք չէ բոլորովին: Բայց այդ մոլուցքը զրոյցող չարիքները ծանօթութեան նուազութեան և ջնջման երեսէն յառաջ եկած էին, և յեղափոխութեան ծայրայնութիւնները զրոյցներու, կամ որ նոյն է՝ անկատար լուրերու, միջոցով քաջալերուեցան: Այսպիսի ազէտ մը կրնար, կը յուսանք, արդիական երկրի մը մէջ միշտ արդելուիլ լուր տարածելու արդի միջոցներով և առանց ծածուկ պահելու ճիգի: Անոնք որ կասկած ունին թէ ճշմարտութիւնը չըսուի իրենց՝ պատրաստ են յոռեգոյնին հաւատալ: Հանրութեան միտքը միշտ աւելի հանդարտ կ'ըլլայ մինչև իսկ աղէտի և խառնակութեան ժամանակ, երբ իր լուրերը առատ և մանրամասնեալ են և զրոյցներն ու ենթադրութիւններն ալ անկաշկանդ կը հրատարակուին իրեն գրոյց ու են-

թագրութիւն: Արդիական երկրի մը մէջ մամուլն պաշտօնն է ընդարձակ ու մանրամասն լուրեր տալ և որոշ զանազանի զրոյցն ու ստուգուած իրողութիւնը: Այս պաշտօնը կը կատարէ մամուլը կատարութեան օգնութեամբ կամ գէթ առանց կատարական արգելքներու, և իր այս կարողութիւնը սպազորութեան գիւտին տեսական ամենակարեւոր արդիւնքն է: Մեզի գիւրիւն է ներկայ մեր ընկերութիւնը երեւակայել իբր աւելի սակաւ և աւելի սուղ գիրքերով: Ստով պակաս պիտի ըլլար ժողովրդային զուարճութիւն մը միայն: Սակայն չենք կրնար երեւակայել անոր շարունակուած իր ներկայ վիճակով՝ առանց լուրերու տարածման իր արդի միջոցներուն: Արդի մեծ ակրութիւնները անկարելի պիտի ըլլային առանց լրագրի: Պետութիւնները բռնապետական պիտի ըլլային, ինչպէս եղան անցեալին մէջ, բռնապետութեան յատուկ ամէն անխուսափելի չարիքներով և անոր երբեմնական անիշխանութեամբ կամ ընկճող դիւանակալութեամբ, և լուրերու ազատ շրջաբերութիւնը պիտի յասկանար բռնապետութեան աւելի մեծ ու գերազանց կազմակերպութեան գէմ ողի ի բոլին մաքառող քաղաքներու և քաղաքային փոքր կառավարութիւններու միայն: Հին աշխարհը անցաւ, վասն զի չկրցաւ ազատութիւնն ու լուրերու ազատ շրջաբերութիւնը ամուր ու զօրեղ քաղաքական կազմակերպութեան մը հետ միացնել: Արդի աշխարհի մեծ ճիգն է այդ միացումը իրագործել: Եւ այդ ուղղութեամբ իր յաջողութիւնը, անկատար և դեռ երկբայական ըլլալով հանգերձ, սպազորութեան գիւտին արդիւնքն է մեծ մասամբ: Մենք լրագրիչներու գոյութեան վարժուած ենք և ստէպ կեանքի հասարակ և նոյն իսկ տաղտկալի մէկ երեսոյթը կը համարինք զանոնք: Մշակեալ մարդիկ չափէն աւելի բան կ'ակնկալեն անոնցմէ եւ կը բաղդատեն զանոնք զրականութեան գլուխ գործոցներու հետ զորոնք կարգալու է հանրութիւնը փոխանակ անոնց: Կը մոռնան թէ լրագրին գլխաւոր նպատակն է լուր տալ և թէ առով արդիական երկրի մը անհրաժեշտ մէկ պաշտօնը կը կատարէ, Լուրի տարածումը անպատճառ չաւելցներ կարգադրողին խելքը, բայց արդիական երկրի մը իր գոյութիւնը կը պահէ ոչ որովհետեւ իր քաղաքացիները խելքով գերազանց են Աթենացիներէն կամ Հոմոնացիներէն, այլ որովհետեւ գերազանց գործիք մը ունին, մամուլը, քաղաքական ծանօթութեան և ուստի քաղաքական աղիցցութեան ծաւալման համար: Հարկ չկայ ըսելու թէ մամուլը այս մեծ պաշտօնին հետ պարտականութիւն մը

ունի նոյնքան մեծ, պարտականութիւն մը՝ որու մէջ կրնայ օգնութիւն գտնել մի միայն հանրութեան խղճէն: Ըշմարտութիւնը չուզող ընկերութիւն մը չկրնար իր լրագիրներէն ստանալ զայն: Շողքորթութեան ու դռնիկ յուզման ծարաւի ժողովուրդ մը կը գնէ այն լրագիրները միայն որ իր ուզածը կը հայթայթեն: Մեքենական ոչ մէկ հնարք կամ գիւտ կարող է հակազդել մարդոց միտքերուն մէջ գտնուող չարութեան: Լաւագոյն հնարքներն իսկ երկայտի գործիքներ են զիրենք գործածողներուն ձեռքին մէջ:

Բայց մամուլը իր ընդարձակ մեքենականութեամբ կօչուած չէ սոսկ զուարճացնել զմարդիկ օրէ օր կամ դիւրին ու փոխառեալ կարծիքներ մատուցանել անոնց այնպիսի բաներու վրայ որոնց վրայ ոչինչ գիտնու: Այլ կօչուած է տալ անոնց այնպիսի ծանօթութիւններ զորոնք պիտի չկրնային այլապէս ստանալ և առանց որոնց պիտի չլըրնային գործօն դեր մը խաղալ իրենց երկրին քաղաքական կեանքին մէջ: Այս ծանօթութեան միջոցով է որ տեւական ու իրական կարծիքներ կը կազմուին, կարծիքներ՝ որ քսան երեսուն տարուան մէջ թերեւս հազիւ մէկ երկու անգամ կ'արտայայտուին վճռական գործով: Անոնք նուազ յաճախ կ'արտայայտուին քան բազմաթիւ այն կարծիքները, զորոնք ընդհանրութիւնը կը գործածէ զլիւսաւորապէս խօսակցութեան նպատակներու համար և որոնք մտքի տեսակ մը աժան պերճանք են, անվնաս թէպէտ տաղտկալի իսկ ըլլան, և աղմուկալից բայց անկարեւոր: Ասոնք նորաձեւութիւններու պէս կը փոխուին և առանց աւելի բանաւորութեան: Իրականութեան հետ քիչ կապակցութիւն ունին կամ ընաւ չունին: Եւ անտարակոյս մամուլը պատասխանատու է անոնց տարածման համար: Միջին դարերու մարդիկ անչուշտ աւելի քիչ կարծիք ունէին քան մեր օրերու մարդիկ: Հաւանօրէն կը խօսակցէին անոնք այժմու մարդոց չափ, բայց աւելի թաղային աղբիւրին եւ նուազ սեռային ազնուացման և պետական գործերու վրայ: Աւելի կը շողակրատէին քան թէ հայեացքներ կը պարզէին: Բայց անոնց շողակրատութիւնը անտարակոյս նոյնքան անհեթեթ էր որքան արդիական մարդոց տարտամ հանրացումները, և հաւանօրէն աւելի նեղացուցիչ էր շողակրատութեան ենթականերուն: Այն ժամանակ շողակրատութենէ զատ, ինչպէս հիմա ալ փոխառեալ զաղափարներէ կամ տեսութիւններէ զատ, կային իրական համոզումներ: Բայց այդ համոզումները աւելի մթին և վտանգաւոր էին քան

այժմեանները, վասն զի աւելի անձուկ փորձատուութեան և աւելի սակաւ ու նուազ ստոյգ ծանօթութեան վրայ հիմնուած էին: Անոնք դուն ուրեք կ'արտայայտուէին գործով և յաճախ կոյր անակնկալ գործով, յայնապէս չնչին պատճառով մը կամ կառավարողներու եւ կառավարեալներու միջև փոխադարձ աղիտութենէ ծագում առնող թիւրիմացութենէ մը գրգռուելով: Մենք կը գանգատինք մամուլ միջոցով զորոնք արագ տարածման և զուտ ենթադրութիւններու անխորհուրդ հրատարակման համար: Սակայն դէթ գիտննք թէ ինչ զրոյցներ կան, և կրնան հերքուիլ նոյնքան արագ որքան արագ կը տարածուին անոնք: Մամուլն է միջոց մը որով հանրութեան միտքը նոյնքան որոշ կը յայտնուի որքան կառավարութեան միտքը: Կը բաւէ որ նախարարները կարգան լրագիրները, և ահա պիտի հասկընան թէ իրենց գործերը վտանգաւոր դժգոհութիւն մը կը յարուցանեն թէ ոչ: Ժողովրդային գայրութի ոչ մէկ պոթկում կրնայ դանտնք յանկարծակիի բերել, եթէ կամաւ կոյր չըլլան, ինչպէս եղաւ Ֆրանսայի Շարլ Ժ. Թազաւորին վերջին դահլիճը: Ընկերային պայքարներու վախճանին դեռ չհասանք: Բայց հիմա այդ պայքարները աւելի զիտակից, աւելի աստիճանական, կարգադրման և իրաւախօհութեան աւելի ընդունակ են քան անցեալին մէջ: Կրնան անոնք մղուիլ առանց սպառնալու քաղաքակրթութեան ամբողջ կազմին, և այս մեծ բարւոքումը կը պարտինք սպազորութեան գիւտին և լրագիրներուն զորոնք սպազորութիւնը կարելի դարձուց:

ԱՂՕԹՔ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՄԱՐ

Համաշխարհային Աւետարանական Միութիւն անունով ծանօթ մարմինը բոլոր աշխարհի Աւետակեղեցիկները կը հրաւիրէ յառաջիկայ Հոկտ. ամսուն 16երորդ օրը յատկացնել բոլոր Իսլամական աշխարհին համար ազօթելու: Այդ օրը մահուան հարիւրամեակն է Թորքատի մէջ վախճանեալ նշանաւոր միսիոնար Հէնրի Մարթինի, որ ինքզինք նուիրած էր Իսլամներու Աւետարան քարոզելու վսեմ գործին: Հէնրի Մարթին այցելած էր բոլոր Իսլամ երկիրները, և ամէն ուր որ գտնուեցաւ իր անկեղծութեամբ, հեղութեամբ, եռանդով, նուիրումով և խոհականութեամբ ամէնուն յարգանքին արժանացած էր:

Այսօր աշխարհիս գրեթէ ամէն կողմերը այս երկու կրօններու հաւատացեալները, այսինքն Իսլամներ և Քրիստոնեաներ, թէ՛ քաղաքական թէ՛